ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՄՇԵՆԱՀԱՅԵՐԻ ԲՌՆԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Սև ծովի հարավ-արևելյան ափերում նուց ի վեր հայկական ներկայության մասին փաստող տարբեր աղբյուրներ կան: Մերձսևծովյան տարածքներում հայերի թիվը զգալիորեն ավելացավ 8-յդ դարի վերջին, երբ արաբական հարկային կեղեքումներից ազատվելու համար հայոց Շապուհ ի Համամ Ամատունի իշխանները 12000 բնակչությամբ Արագածոտն և Կոտայք գավառներից արտագաղթեցին Բյուզանդիա և հաստատվեցին Սև ծովի հարավ- արևելյան ափամերձ շրջաններում: Ավելի ուշ Համամ Ամատունի իշխանը այնտեղ կառուցում է մի քաղաք՝ այն իր անունով կոչելով Համամաշեն, որը հետագայում վերածվում է Համշենի: Հենց այդ անվամբ էլ շրջանի հայ բնակչությանը սկսում են անվանել համշենահայեր և այս տերմինը հետագայում աշխարհագրական ավելի լայն տարածում է ստանում:

Հայտնի է, որ հայերը Օսմանյան կայսրությունում պարբերաբար ենթարկվել են տարատեսակ հալածանքների, որոնցից անմասն չեն մնացել նաև Համշենի հայերը: Այդ հալածանքների շարքում կարևոր տեղ է զբաղեցնում բռնի կրոնափոխության քաղաքականությունը, որը թուրքական իշխանությունները Սև ծովի ափամերձ շրջաններում բնակվող հայության նկատմամբ առավել ակտիվ սկսել են կիրառել արդեն 16-րդ դարի վերջին: Առկա աղբյուրները, գրականությունը ցույց են տալիս, որ բռնի իսլամացված հայերի պատմության մեջ առավել ուսումնասիրված կարելի է համարել համշենահայերի խնդիրը: Օսմանյան տիրապետության շրջանում հայերի բռնի իսլամացման համար կիրառված մեթոդները ունեն բազմաթիվ ընդհանրություններ, ուստի համշենահայերի կրոնափոխության ուսումնասիրությունը նաև հստակ պատկերացում է տալիս Օսմանյան կայսրությունում ընդհանուր իսլամացման քաղաքականության վերաբերյալ:

Օսմանյան թուրքերը 1453թ. գրավելով Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը՝ նոր թափով շարունակեցին իրենց առաջխաղացումը: Ոյոշ ժամանակ անց՝ 1461թ. գրավեցին նաև Տրապիզոնի կայսրությունը: Կարելի է ասել, որ Սև ծովի

հարավ-արևելյան ափերի ոչ մուսուլման բնակչության ուծացման քաղաքականության որոշակի տարրեր արդեն նկատելի էին այդ ժամանակ, սակայն կարծիքներ կան նաև, որ բռնի իսլամացման առավել ակտիվ փորձերը սկսվել են 16-րդ դարի վերջերից[1]: Կիրառված սիստեմատիկ քաղաքականության հետևանքով թուրքերին հաջողվեց բռնի իսլամացման ենթարկել տարածաշրջանի ոչ մուսուլման մի շարք ժողովուրդների՝ հույներին, լազերին, վրացիներին և համշենահայերի մի մասին: Ինչպես իրավացիորեն նկատում է հայազգի արևելագետ Ռ. Կոնդաքչյաեը, թուրքերը ձգտում էին իսլամացնել հատկապես քրիստոնյա Ռուսաստանին սահմանակից ազգերին՝ ստեղծելով յուրահատուկ կրոնական պատնեշ քրիստոնեության և Ռուսաստանի դեմ[2]: Սակայն հարկ է հատուկ շեշտել, որ մերձսնծովյան ոչ մուսուլման ժողովուրդներից բռնի իսլամացման քաղաքականությանը ամենաերկարը դիմադրեցին համշեհահայերը և ավելի ուշ միայն երանց մի հատված ստիպված կրոնափոխ եղավ: Անհրաժեշտ ենք գտնում նշել, որ Համշենում իսլամացումը տեղի է ունեցել գերազանցապես բռնի մեթոդներով, մահվան սպառնալիքի տակ և կեղծ են թուրքական այն տեսակետները, համաձայն որոնց հայերը կամովին են ընտրել իսլամը: Մրան զուգահեռ ավելորդ չէ նկատել նաև, որ թուրքական իշխանությունները Համշենում ես վարձել են կիրառել շահագրգռելու քաղաքականությունը, որպեսզի մարդիկ «կամովին» իսլամ ընդունեն[3]: Կան փաստեր, որոնք վկայում են, որ Համշենում իրականացվել են բռնի իսլամացման քաղաքականության այլ մեթոդներ ես. այսպես, Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող 1531 թվականի մի ձեռագրից տեղեկանում ենք, որ Համշենում հայ բնակչության շրջանում անցկացվել են մանկահավանքներ (դեշիրմե). *«Թվին ՁՈ /-1531/ սուլթան Սուլեյմանն՝ որ է Մելիմի տղայն ենիչարա համար տղայ ժողվեց՝ի*

---

[1] Լուսինե Սահակյան, Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի մահմեդականացման քաղաքականության հետևանքները, *Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ,* Ռուբեն Սաֆրաստյանի ընդհանուր խմբագրությամբ, հ. IV, Ասողիկ, Երևան, 2006, էջ 216-218):

[2] Раффи Кондакчян, *Турция: внутренняя политика и ислам,* Ереван, Издательство АН Армянской ССР, 1983, стр. 22.

[3] Բարունակ Թռոլաբյան, *Հայ ազգագրություն և բանահյուսության,* Երևան, ՀՍ ԳԱԱ հրատարակչություն, 1981, հ. 13, էջ 67:

հայոց ազգէս. այսչափ տեղացս այս տարի ժողվեցին՝ ու զապագայն Աստծոյ է գիտելի ի Տրապիզոնու, ի Համշենու (ընդգծումը մերն է Մ.Ա.), ի Սպերու, ի Բաբերդու, ի Դերջանու....»[4]:

Օսմանյան կայսրության հեռագիտն թուլացմանը զուգահեռ ավելի լայն թափ էր ստանում բռնի իսլամացման քաղաքականությունը[5]: Համշենի և մերձակա հայաբնակ շրջանների բռնի իսլամացման մասին տվյալների ենք հանդիպում ազգագրագետ-բանահավաք Սարգիս Հայկունու շարադրած Մն գետացի հայերի մասին պատումից, համաձայն որի Մն գետի կամ Կարա-դերեի հայության իսլամացումը տեղի է ունեցել 1708-1710 թթ.: *«Մն գետացիք կասուին, որ Համշենցոց պես հայերէն կը խոսին և 1708-1710 թուականներուն թուրքացած են կրօնամոլ մօլլաներու և ենի-չերիներու ճնշման ներքև»*[6]: Իսկ տարբեր աղբյուրների համաձայն, բուն Համշենի կրոնափոխությունը տեղի է ունեցել Մն գետացիներից առաջ, ուստի վերաբերելու է 17-րդ դարին[7]: 1872 թ. պոնտահայերի մասին ուշագրավ մի տեղագրություն պատրաստած Պողոս քահանա Թումայանցը անդրադառնալով Կարա-դերեի կրանափոխությանը՝ ասում է, որ այնտեղի հայերը գաղթել են Սպերից, Բաբերդից և Համշենից. *«Համշէն մեծ գաւառն փախչելով յատուկ կրօնափոխութենէ ազատելու նպատակու ասկէ գրեթէ 170-180 տարի առաջ»*[8] [7, էջ 175]: Եթե հաշվի առնենք, որ այս տեղագիրը պատրաստվել է 1870-ականների սկզբին, ապա պարզ է դառնում, որ կրոնական հալածանքների պատճառով համշենահայերի գաղթը բուն Համշենից տեղի է ունեցել 1690-1700 թթ.: Թումայանցը նաև նշում է. *«Երբ Համշեն գաւառը մնացող ժողովուրդը ամբողջ տաճկացուցին և հալածանքը Գարա-տէրէի վրա դարձավ՝ հազարաւոր ընտանիք ամէն բանէ զրկուած փախան Տրապիզոնի, Օրտուի, Ունիայի, Չարշամպայի, Պաֆուայի, Սինոպի և մինչև*

---

[4] Մանվել Զուլալյան, "Դեվշիրմե"-ն /մանկահավաքը/ Օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների, *Պատմաբանասիրական հանդես*, Երևան, 1959, թիվ 2-3, էջ 251:

[5] Кондакчян, *Турция: внутренняя политика и ислам*, стр. 22.

[6] Սարգիս Հայկունի, Կորած ու մոռացված հայեր, Մն գետացիք, *Արարատ*, Վաղարշապատ, 1895, թիվ Է /7/, էջ 239:

[7] Լևոն Խաչիկյան, Էջեր համշինահայ պատմությունից, *Բանբեր Երևանի համալսարանի*, Երևան 1969, թիվ 2, էջ 136:

[8] Պողոս քահանա Թումայեանց, *Պոնտոսի հայերը. Աշխարհագրական եւ քաղաքական վիճակ Տրապիզոնի*, Տփղիս, "Լումայ", 1899, գիրք Բ, էջ 175:

Ստասյազարի գիւղերն ու քաղաքներ....»: Հայր Հակոբոս Տաշյանը կարծում է, որ Համշենի բռնի իսլամացումը սկսվել է 17-րդ դարի վերջերին և շարունակվել ամբողջ 18-րդ դարի ընթացքում[9]: Նույն կարծիքին է նաև Մխիթարյան միաբան Հայր Ղուկաս վարդապետ Ինճիճյանը, որը 1806թ. գրում է. *«Բնակիչք երկրին յառաջագոյն հայ էին, այլ ի յելս ԺԷ դարուն եւ ի սկիզբն ԺԸ-երորդին առհասարակ հանդերձ ամբողջ շրջակայ գիւղօրէիւք դարձան ի տաճկութիւն...»*[0]: Այն, որ մինչև 18-րդ դարի սկիզբը Համշենի հայության շրջանում իսլամացվածները մեծ թիվ չեն կազմել փաստում են տարբեր աղբյուրներ, որոնց թվում խիստ կարևոր են օսմանյան աշխարհագիր մատյանները[11], որոնց մանրակրկիտ ուսումնասիրությունը ներկայացրել է թուրքագետ Լուսինե Սահակյանը: Համշենահայերի բռնի իսլամացման քաղաքականությունը ակտիվորեն դրսևորվել է նաև 19-րդ դարի վերջին քառորդին, որն իր վերջնակետին է հասել 1915թ. Հայոց ցեղասպանության տարիներին: Բռնի իսլամացմանը զուգահեռ և դրանից խուսափելու համար համշենահայերը դիմել են նաև գաղթի, որի հետևանքով լայնացել է նրանց աշխարհագրական ափռվածությունը:

Ավելորդ չէ նկատել, որ այսօր Թուրքիայի տարածքում բնակվող կրոնավոխ համշենահայերի յուրահատկություններից է այն, որ նրանց մի մասը մինչև մեր օրերը պահպանել է հայերեն խոսվածքը, հայկական, քրիստոնեական որոշ սովորույթներ: Կենսակերպի այս երկակի բնույթը պատճառ է դարձել, որպեսզի մասնագիտական գրականության մեջ նրանց երբեմն անվանեն «կես-կես»-եր: Արտաքուստ մուսուլման, սակայն իրականում քրիստոնյա համշենահայերի վիճակին անդրադարձել են մի շարք հեղինակներ: Այսպես, համշենահայերի խնդրի բազմամյա ուսումնասիրող Սերգեյ Վարդանյանը հրատարակել է Վենետիկի Մխիթարյան միաբանության Հայր Պողոս վարդապետ Մեհերյանի անտիպ ուղեգրությունից մի հատված, որում նա 1776թ.

---

[9] Հ. Յակոբոս վ. Տաշեան, *Հայ բնակչութիւնը Սեւ ծովեն մինչեւ Կարին*, Վիեննա, Մխիթարեան տպարան 1921, էջ 30:

[10] Սերգեյ Վարդանյան, Համշենցի մուսուլման հայերի ուսումնասիրության պատմությունից, *Իրան-Նամէ*, Երևան, 1989, թիվ 1-2-3, էջ 2:

[11] Լուսինե Սահակյան, Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի մահմեդականացման քաղաքականության հետևանքները, *Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ*, Ռուբեն Սաֆրաստյանի ընդհանուր խմբագրությամբ, հ. IV, Ասողիկ, Երևան, 2006, էջ 212-215):

սեպտեմբերին, լինելով Համշենի Խնակ գյուղում՝ գրում է, որ այնտեղ ապրում էին 200 տուն մուսուլման և 5-6 տուն քրիստոնյա հայեր[12]: Թեև բնակչության մեծամասնությունը պաշտոնապես եղել է մուսուլման, բայց ինչպես նշում է հոգևորականը. *«Յաջմէ եւ յահեկէ համբուրէին զաջն իմ»*[13]: Ավելին՝ շատ իսլամացված համշենահայեր խնդրել են քրիստոնեական ծեսով օրհնել իրենց նախնիների գերեզմանները: Ավելի ուշ Մխիթարյան միաբանության մեկ այլ գործիչ Մինաս Բժշկյանը 19-րդ դարի սկզբին շրջագայելով Համշենում՝ նշում է. *«Համշենցիք կէս-կէս են. շատը դարձած են, բայց քրիստոնէութեան սովորութիւնը կը պահեն, ժամոց և ողորմութիւնը պակաս չեն ըներ. գրեթէ ամէնքը Վարդավստին և Վերափոխման կերթան եկեղեցին մոմ կը վառեն և մատաղ կընեն իրենց պապերուն հոգուն համար. Բոլորը հայերէն կը խօսին»*[14]: Նույն խնդրին է անդրադարձել նաև Հ. Տաշյանը. *«Բնականապէս այսպիսի բռնութեամբ իսլամացած ժողովուրդ մը երկար ատեն կէս-կէս կը մնար: Այս բառով կը նշանակուին այս կողմերն անոնք, որ արտաքուստ ստիպուած են այլ եւս մահմետական մնալ – որովհետեւ թուրքական ու իսլամական օրէնքով իսլամացածի մը քրիստոնէութեան վերադարձի վարձն իսկ մահապարտութեան պատիժ կը կրե. – բայց ներքուստ կը պահէ աւելի կամ նուազ երկար տեւողութեամբ յիշատակն անցելոյն եւ վառ ոգի մը ներքին քրիստոնեական ու ազգային համոզման»*[15]:

Այսպիսով՝ առկա նյութերը ևս մեկ անգամ փաստում են, որ բռնի իսլամացման քաղաքականությունը Օսմանյան կայսրությունում տարբեր ժամանակաշրջաններում եղել է անկյունաքարային և իր մեջ պարունակել է հստակ ցեղասպանական գործառույթներ, որին զոհ են գնացել բազմաթիվ ոչ մուսուլման ժողովուրդներ:

---

[12] Մերգեյ Վարդանյան, *Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը*, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2009, էջ 33:

[13] Վարդանյան, *Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը*, էջ 419:

[14] Հ. Մինաս վրդ. Բժշկեան, *Պատմութիւն Պոնտոսի որ է Մեծ ծով*, Վենետիկ, 1819, էջ 96-97:

[15] Տաշեան, *Հայ բնակչութիւնը Մեծ ծովեն մինչեւ Կարին*, էջ 35: